

Նուէրներու, Պատարագի եւ ողորմութիւն ընելու մասին

Աղքատներուն ընդունելութիւն ընելը շատ օգտակար է ու անոնց աղօթքները Աստուծոյ մօտ են. «Երանելի է ան, որ կը խորհի աղքատին եւ չքաւորին մասին, Տէրը կը փրկէ զայն, երանելի կ'ընէ երկրի վրայ եւ թշնամիներուն ձեռքը չի մատներ զայն»: (Սաղմոս 41:1-3): Կարիքաւորները կերակրելու երջանկութիւնը այս է, ինչ որ Քրիստոս իրեն համար կատարուած կը նկատէ: Իսկ ի՞նչ պիտի շահիս, երբ ունեւորները խնճոյքի հրաւիրես եւ կամ ի՞նչ պիտի ըլլայ անոր օգուտը: Անօթիներուն համար եղած ընդունելութիւնը օգտակար է, իսկ կուշտներուն համար եղածը՝ ոչ: Քրիստոս չըսաւ. «Յագեցածները կշտացուցիք» ու նաեւ չըսաւ. «Ճամելիք տուիք անոնց, որոնք զինով էին», այլ ըսաւ. «Տեսաք անոնք, որ ծարաւ էին եւ դուք անոնց ջուր տուիք խմելու: Տեսաք մերկերը ու զանոնք հագուցիք եւ օտարներուն այցելեցիք»: Նման գործերն են, որ արժանի պիտի ըլլան վարձատրութեան եւ երանութեան եւ ոչ թէ կուշտներուն եւ ունեւորներուն համար եղած կերուխումները, որովհետեւ ան, որ աղքատը, կարօտեալը, օտարը, հիւանդը եւ անտունը կը կերակրէ, ոչ թէ մարդ մը, այլ՝ Քրիստոսն է, որ կ'ընդունի, Քրիստոսն է, որ կը սփռուի, Քրիստոսն է, որ կը մխիթարէ, Քրիստոսն է, որ կը հանգչեցնէ եւ Քրիստոսն է, որ կը ծառայէ, քանզի անսուտ է Տէրունի խօսքը:

(Ճառեր Յովհան Մանդակունի)

ԽԱՉԱԼԷՍ



Հանդիսաւոր տօներուն եկեղեցական թափօրը նոյնացնող զարդարանք մըն է իսաչալէմը:

Փայտեայ ձողունին վերի ծայրամասը փոքր իսաչով եւ իսաչին ներքեւ կախուած ուղղանկիւն քառանկիւն թաւիշի կամ կերպասի կտոր մը, որուն վրայ ասեղնագործուած կամ տպուած կ'ըլլայ Քրիստոսի տնօրինական կեանքէն զանազան զարդարանքներ, ինչպէս իսաչելութեան, Յարութեան, Մկրտութեան, Համբարձման եւ այլ նկարներ:

Թափօրներու ընթացքին իսաչալեմները գոյգ կը գործածուին, երբեմն նոյնիսկ երկու կամ երեք գոյգ, ինչ որ թափօրներուն կու տայ յաւելեալ նոյնութիւն:

ԾԻՍԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ



ԲՈՒ ԽՕՍԲԵՐ ԽՄ ՈՅԲԵՐՈՒՄ ԵՐԱԳ Է ՈՒ ԽՄ ԸԱԽԻՂՆԵՐՈՒՄ ԼՈՅՍ (Ս, 119-105)

ԺՁ. ՏԱՐԻ ԿԻՐԱԿԻ, 27 ՕԳՈՍՏՈՍ 2023 ԹԻՒ 35

ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐՈՒ ԱՍՏՈՒԱԾԱՇՆՉԱԿԱՆ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ Ես. 9.8-19: Բ. Կր. 1.1-11: Սր. 4.35-41

ԱԲԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՄԱՐԿՈՍԻ 4.35-41

Նոյն օրը երեկոյեան, Յիսուս իր աշակերտներուն ըսաւ. «Եկէ՛ք լիճին միւս կողմը անցնինք»: Աշակերտները ձգեցին ժողովուրդը եւ բարձրացան այն նաւակին մէջ, ուր Յիսուս կը գտնուէր: Հոն ուրիշ նաւակներ ալ կային:

Յանկարծ գօրաւոր հով մը փոթորկեց ծովը: Ալիքները նաւակին զարնուելով ներս կը թափէին զայն լեցնելու աստիճան, մինչ Յիսուս նաւակին յետսակողմը բարձի մը վրայ կը բնանար: Աշակերտները արթնցուցին զինք եւ ըսին. «Վարդապետ, հոգի չէ՞ որ մենք կը կորսուինք»:

Յիսուս ոտքի ելլելով հովուն սաստեց. «Դադրէ՛», եւ ծովուն ըսաւ. «Հանդարտէ՛»: Հովը դադրեցաւ եւ կատարեալ հանդարտութիւն տիրեց: Ապա Յիսուս դարձաւ իր աշակերտներուն. «Ինչո՞ւ այսպէս վախկոտ էք: Տակաւին հաւատք չունի՞ք»: Անոնք չափազանց վախցան եւ իրարու կ'ըսէին. «Ո՞վ է արդեօք այս մարդը, որուն նոյնիսկ հովն ու ծովը կը հնազանդին»:

Ինչո՞ւ այսպէս վախկոտ էք. տակաւին հաւատք չունի՞ք

Խօսքը ուղղուած է աշակերտներուն, որոնք լիճին միւս կողմը անցնելու ժամանակ գօրաւոր հով մը փոթորկեց լիճը: Աշակերտները այս անակնկալին դիմաց վախցան: Անոնք բարձրաձայն դիմեցին Յիսուսին եւ Յիսուս անմիջապէս հասաւ եւ հանդարտեցուց փոթորիկը: Այսօր մեր կեանքին մէջ եւս շատ անակնկալ պահեր կ'ունենանք: Փոթորիկներ շատ են եւ ահա այսօր աւետարանը կը սորվեցնէ, թէ այդ բոլորին դիմաց պէտք չէ տկարանանք եւ յանձնուինք, այլ՝ ընդհակառակը պէտք է հաւատով դիմակայենք բոլոր դժուարութիւնները միշտ Յիսուսի դիմելով աղօթքի նամբով: Վախը եւ յուսահատութիւնը պէտք է հեռացնենք մեր կեանքէն, որովհետեւ մենք լոյսի որդիներ ենք՝ Քրիստոսի զաւակներ, որ միշտ պաշտպանուած ենք մեր Հօր գօրութեամբ: Հաւատով ու աղօթքով յաղթահարենք բոլոր դժուարութիւններու:

ՍՈՒՐԲԵՐ ԵՒ ՏՕՆԵՐ

ԳԻՒՏ ԳՕՏԻՈՅ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆԻ

Վստահաբար մեզմէ շատերը լսած են այս սոճին մասին: Գիւտ Գօտույ Ս. Աստուածածինի սոճը ըստ մեր եկեղեցւոյ սոճացոյցին այս տարի կը պուգադիպի Կիրակի, 31 Օգոստոսին:

Միասնաբար ծանօթանանք սոճին:

Արկադիոս կայսրի օրով (395-408) Երուսաղէմի մէջ գտնուած Ս. Աստուածածինի գօտին յատուկ ուշադրութեամբ ու յարգանքով տարուեցաւ Պոլիս, ուր հաւատացեալները մեծ երկիւղածութեամբ առջեւէն քայլեցին եւ պատուով ու յարգանքով վայն պետեղեցին եկեղեցւոյ մէջ:

Յոյները այդ առթիւ կառուցեցին նոր եկեղեցի մը եւս, կոյսին նուիրուած, եւ գօտին դրին այնտեղ՝ հաւատացեալներու պաշտամունքի առարկայ դարձնելու համար եւ սոճը նշանակեցին Օգոստոս 31-ը:

Հայերու համար յետսամուտ սոճն է Գիւտ Գօտույ օրը: Միմէն կաթողիկոսը, 1774 թուականին, իր հրատարակած օրացոյցին մէջ պետեղեց Գիւտ Գօտույ սոճը եւ այնուհետեւ սոճակատարութեան մաս կազմեց:

ՄԻՐԵԼ ԲԱՐԵՎԱՍԵ ԵՒ ՕԳՏԱՎԱՐ ԳԱՌՆԱԼ ԱՆՈՐ

Երբ հնարաւորութիւն ունիս կարօտեալին օգնելու՝ մի՛ տնտնար: Եթէ կրնաս բարիք գործել, մի՛ ըսեր. «Գնա՛, վաղը եկո՛ւր, կու տամ», որովհետեւ չես գիտեր, թէ վաղը ինչ կը պատահի քեզի: (Առակայ 3:27-28)

ԱՍՏՈՒԱԾԱԾՐԸ ԵՒ ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՆ



Հայ եկեղեցին իր սկիզբէն իսկ յատուկ յարգանք ցուցաբերած է Աստուածամօր նկատմամբ, եւ հայրերու գրականութեան ճամբով վայն ներկայացուցած է իբրեւ «Անարատ տաճար», «Սերովբէ հողեղէն», «Մարմնատեսիլ քերովբէ»: Մեր եկեղեցւոյ մէջ կը նշուին սուրբ Կոյսին նուիրուած եօթը տարբեր սոճեր. Յղութիւն, Ծնունդ, Ընծայումն ի Տաճար, Աւետում, Վերափոխում, Գիւտ գօտույ եւ Գիւտ տփոյ:

Իւրաքանչիւր սոճն կապուած է Աստուածամօր կեանքին հետ առընչութիւն ունեցող դէպքի մը. Յղութիւնը՝ Սուրբ Հոգւոյ ներգործութեամբ, Ծնունդը՝ իբրեւ «Երկրորդ Եւա», Տաճար ընծայումը՝ իր ծնողքին՝ Յովակիմի եւ Աննայի ձեռամբ, Աւետումը՝ Գաբրիէլ Հրեշտակին կողմէ, Վերափոխումը՝ իբրեւ երկնաւոր հարս, Գօտին գիւտը եւ Տուփին գիւտը՝ որուն մէջ իր գլխածածկոյթը կը դնէ Սուրբ Աստուածածինը:

Հինգերորդ սոճը՝ Աստուածածնայ վերափոխումը. Օգոստոս ամսուան 15-ի մերձաւոր Կիրակին նուիրուած է Աստուածամօր Վերափոխման:

ՀՈԳԵՒՈՐ ՊԱՏԳԱՍ

ԻՆՉՊԷՍ ԿԸ ՍԿՍԻՍ ԵՒ Կ՝ԱՒԱՐՏԵՍ ՕՐԴ

Գալիք օրերու համար մեր հոգեւոր խորհրդածութեան առանցքը պիտի դարձնենք Յովհաննէսի Աւետարանին մէջ յիշուած շնացող կնոջ դրուագը (Յհ. 8.3-11), որմէ շատ բան ունինք ստրվելիք: Յհ. 8.2-ին մէջ կը կարդանք, որ Յիսուս առաւօտ կանուխ տաճար գնաց եւ ժողովուրդը իրեն կու գար եւ ինք անոնց կ'ուսուցանէր: Յիսուս իր օրը կ'աւարտէր աղօթքով (Յհ. 8.1), եւ օրը կը սկսէր աղօթքով եւ ուսուցանելով: Նայեցէ՛ք սակայն Փարիսեցիներուն: Անոնք իրենց օրը կ'աւարտէին չար խորհուրդներ եւ ծրագիրներ մշակելով եւ օրերնին կը սկսէին անգթութեամբ, քննադատութեամբ, եւ մեղաւոր մարդիկ փնտռելով եւ անոնց մահը պահանջելով:

ՄԵՐ ՍՈՐՎԵԼԻՔ ՀՈԳԵՒՈՐ ԴԱՍԸ

Միբելի ընթերցող, դուն ինչպէ՞ս կը սկսիս եւ կ'աւարտես օրդ: Աղօթքո՞վ, թէ՛ չար ծրագիրներ մշակելով: Վստահ եղի՛ր, որ եթէ օրդ աւարտես չար բաներ ծրագրելով եւ չար բաներ մտածելով անկասկած, որ Փարիսեցիներուն նման օրդ պիտի սկսիս չարիք գործելով:

Բարի ուլան ձեր բոլորին օրերը:

ԵԹԷ ԿԱՍ ԵՐԲ Կ՝ՈՒՉԵՍ...

ԵԹԷ Կ՝ՈՒՉԵՍ ԳԻՏԱԿԱՆ ԱՆՎԱՐԱՏՈՒԹԵԱՆ ԷՈՐԹԻՒՆԸ, ԱՆՈՐ ԱՐՄԱՏԸ ԵՂՈՂ ԲԱՐՈՅԱԿԱՆ ԱՊԿԱՆՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԱՆՈՐ ՎԱՍՃԱՆԸ,

ԿԱՐԿ՝ ՍԱՂՄՈՍ 53

Անմիտ մարդիկ իրենց միտքին մէջ ըսին. «Աստուած չկայ», ուստի ապականեցան, եւ զգուելի մեղքեր գործեցին: Չկայ մէկը, որ բարին գործէ: Աստուած երկինքէն կը նայի մարդոց, տեսնելու համար՝ թէ կա՞յ իմաստուն մարդ մը, որ Աստուծոյ կը դառնայ: Ամէնքն ալ մոլորեցան եւ մոլորեանց գիրկը ինկան: Չկայ մէկը որ բարին գործէ, չկայ մէկը, ո՛չ իսկ հոգի: Երբեք խելքի պիտի չգա՞ն անոնք՝ որոնք չարիք կը գործեն, անոնք՝ որոնք իմ ժողովուրդս կ'ուտեն հացի պէս, եւ Աստուծոյ չեն աղօթեր: Բայց յանկարծակի ահ ու դողի պիտի մատնուին, ահ ու դողի մը՝ որուն նմանը չէ եղած երբեք. որովհետեւ Աստուած ցիր ու ցան պիտի ընէ քեզ պաշտպանողներուն ոսկորները, եւ դուն զանոնք ամօթահար պիտի ձգես, որովհետեւ Աստուած մերժեց զանոնք:

Ո՛հ, տես Աստուծոյ ժողովուրդին փրկութիւնը, որ Միոնէն պիտի գայ: Երբ Աստուած ետ դարձնէ գերի տարուած իր ժողովուրդը, Յակոբի սերունդները պիտի ցնծան եւ ուրախանան:

ՄԻԱՍՆԱԲԱՐ ԿԱՐԿԱՆՔ

ՍԱՂՄՈՍ